լովքն հանդերձ։ Կուսակալն խոստացաւ 'ի վերադարձին իւրում առնել դատաստան, և քննել զայն օրինօք դատարանի։ Իբրեւ դարձաւ 'ի Քեբրոնէ 'ի բանակն, կազմեցաւ ժողով 'ի վրան Քեահէայ Պէյին, ուր էին Դատաւորն եւ գլխաւորք այլազգեաց Երուսաղէմի · կոչեցին անդ զՀայս և զԼատինս, և յետ բազմադիմի բանից և աստուածեանց յերկուց կողմանց, հարցին Դատաւորք զԼատինս, թէ ունի՞ն Արքունի հրովարտակ վասն բացման դրան այնորիկ, թէպէտ ասէին ունել, բայց ոչ կարացին բերել, զի ոչ ունէին · տեսեալ Դատաւորաց թէ առանց Արքունի հրամանի բացեալ է դուռն եւ լեալ պատճառ խռովութեան 'ի մէջ երկուց ազգաց, հատին վճիռ զի Հէօճմէթի Շէրիով փակեսցի դուռն քարամբք, եւ Լատինք մտցեն և ելցեն 'ի յատկացեալ դրանէ իւրեանց որ 'ի մէջ Այրին, մինչեւ եկեսցէ Արքունի հրովարտակն։ Եւ Կուսակալն առաքեաց զՔաղաքապետն Երուսաղէմի եւ Դատաւորն, զՔեահէայն իւր ընդ Հայոց 'ի Բեթղեհէմ · հասեալ անդ մտին յեկեղեցին, խնդրեցին զբանալի դրան 'ի Լատինաց · իբրեւ ոչ ետուն նոքա պատճառելով զպատճառս՝ քակեալ հանին զդուռն 'ի տեղւոջէ իւրմէ, եւ տարեալ ընկեցին զնա 'ի վանս նոցին, եւ արկեալ քարինս հիւսեցին զտեղի դրան և ծեփեցին յերկուց կողմանց, (1819 · 'ի 16 Ապրիլի) յաւուր նոր Կիւրակէի՝ և դարձան յԵրուսաղէմ։ Իսկ Կուսակալն առեալ զԻլամ Դատաւորին եւ զՀանրագիրս այլազգեաց՝ առաքեաց 'ի Կոստանդինուպօլիս առ գործակատար իւր, զի ըստ մտաց նոցին շնորհեսցի Հայոց հրովարտակ արքունուստ։ Եւ Խորհրդականք վանաց Ս · Յակոբայ գրեալ յայտ արարին առ Պօղոս Պատրիարք և առ Իշխանաւորս ազգին, զոր միանդամ արար Կուսակալն, և մեծահայց պաղատանօք աղաչէին զնոսա հոգ տանել վասն հրովարտակին և փութացուցանել զնա յԵրուսաղէմ · զի փակեալ մնասցէ դուռն, և մի թշնամիք կանխեալ այլ և այլ բանիւք ծանուսցեն զայն 'ի Դուռն։ Իսկ Կուսակալն յորժամ դարձաւ 'ի Դամասկոս՝ գրեաց առ Դատաւորն Երուսաղէմի, զի ըստ որոշման ժողովոյն փակեալ մնասցէ դուռն մինչ 'ի գալուստ հրովարտակին · զայս գիր առեալ Յակոբ վարդապետի դիմեաց առ Բդեշխն Աբքէի Սիւլէյման Փա-